Հավելված 2
2024 թ. «հունվարի» «22»-ին
կնքված N *ԴՏՊ-1032-11002/2024-ԱՎ* պայմանագրի

## Դրամաշնորհային հաշվետվություն N_1_

1. **Ընդհանուր տեղեկատվություն**

| | |
|---|---|
| **Ծրագրի անվանում** | «Տարեցների և հաշմանդամություն ունեցող անձանց տնային պայմաններում խնամքի ծառայություններ» |
| **Դրամաշնորհի N** | ԴՏՊ-1032-11002/2024-ԱՎ |
| **Դրամաշնորհատու կազմակերպություն** | ՀՀ ԱՍՀՆ |
| **Դրամաշնորհառու կազմակերպություն** | «Արմավիրի զարգացման կենտրոն» ՀԿ |
| **Ծրագրի իրականացման ժամանակահատված** | 01.01.2024-31.12.2024 |
| **Հաշվետու ժամանակահատված** | 01.01.2024-31.03.2024 |
| **Ներկայացման օր** | 03.04.2024 |
| **Հաշվետվության պատասխանատու (անուն, ազգանուն, պաշտոն)** | Նաիրա Առաքելյան,<br>ՀԿ Նախագահ |

**2. Բովանդակային հաշվետվություն**

**2.1 Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:**

Ծրագրի հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են հետևյալ գործողությունները.

- **Շահառուների կարիքների գնահատում**. Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է 47 շահառուների կարիքների գնահատում համապատասխան մեթոդաբանությամբ, որի արդյունքում ստացել ենք հստակ նկարագիր շահառուի կարիքների վերաբերյալ: Նրանք Արմավիր քաղաքի բնակիչներ են՝ տարեց և/կամ հաշմանդամություն ունեցող անձիք:

- **Անհատական սոցիալական ծրագրի մշակում**. Գնահատման արդյունքում սոց.աշխատողի գլխավորությամբ թիմի կողմից մշակվել է յուրաքանչյուր շահառուի անհատական սոցիալական ծրագիր, որի արդյունքում յուրաքանչյուր շահառուի համար արդեն առկա է հստակ ծրագիր/պլան, որի հիման վրա մատուցվում են անհրաժեշտ ծառայությունները:

- **Շահառուների հետ պայմանագրերի կնքում**. Կարիքները գնահատված շահառուներից 46-ի հետ կնքվել են ծառայությունների մատուցման պայմանագիր, որը թույլ է տալիս ունենալ իրավական կարգավորում ծառայություն մատուցողի և ծառայություն ստացողի միջև:

- **Ամենօրյա խնամքի ծառայությունների մատուցում**. Ըստ շահառուների հետ կնքված պայմանագրի, ծառայությունների մատուցման ժամանակացույցի և անհատական սոցիալական ծրագրի՝ ծրագրի հաշվետու ժամանակահատվածում շահառուներին մատուցվել են խնամքի անհրաժեշտ ծառայություններ շահառուների տանը՝ կենցաղային սպասարկում, բժշկական օգնություն և սպասարկում, սոցիալական խորհրդատվության տրամադրում:

  Սոցիալական աշխատողը հաշվետու ժամանակահատվածում նոր ընդունված երկու աշխատակիցներին ծանոթացրեց շահառուների հետ, ներկայացրեց աշխատանքի բովանդակությունը, գործառույթները:

| |
|---|
| Կենցաղային աշխատողներն իրականացնում են շահառուի անհատական պլանով նախատեսված այցելություններ, կատարում են կենցաղային սպասարկում, տան մաքրություն, գնումներ, սննդի պատրաստում, ըստ պլանի մշակված այլ գործողություններ՝ անհատական կարիքներին համապատասխան:<br><br>Բուժքույրերի կողմից կազմակերպվել է բժշկի կոնսուլտացիա, լաբորատոր հետազոտություններ, սրտաբանի, լոռ բժշկի կոնսուլտացիա, անալիզների ընդունում, միջմկանային ներարկումներ, ներերակային ներարկումներ բժշկի ցուցումով: Ծրագրի շրջանակներում բուժքույրերը շարունակում են տեղամասային պոլիկլինիկայից անվճար ստանալ համապատասխան դեղորայք: |

**2.2 Խնդրում ենք նկարագրել ծրագրի առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների , նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ ծրագրի խնդիրների/նպատակի իրականացմանը:**

| |
|---|
| Ծրագրային բոլոր գործողությունները հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են համաձայն աշխատանքային պլանի:<br>Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են ծրագրային նախատեսված արդյունքները հետևյալ չափով.<br>• Ամսական 46 տարեց և հաշմանդամություն ունեցող անձանց տնային խնամքի ծառայությունների մատուցում,<br>• Սոցիալական ծառայության տրամադրում խնամքի կարիք ունեցող, կյանքի դժվարին իրավիճակում հայտնված՝ տարեց և/կամ հաշմանդամություն ունեցող 18 տարին լրացած անձանց: |

**Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)**

| |
|---|
| Հաշվետու ժամանակահատվածում մատուցվող ծառայությունների մասին տեղեկատվություն է դրվել ԱՋԿ ՀԿ-ի սոցիալական էջում |

https://www.facebook.com/watch/?mibextid=WC7FNe&rdid=XVRmqGkRmKda73gw&v=265609623222978
https://www.facebook.com/watch/?mibextid=WC7FNe&rdid=QmZRNcLacrFU3mHR&v=220018371132532
https://www.instagram.com/s/aGlnaGxpZ2h0OjE4MDA0NTQ1OTcxMzg2NzAw?story_media_id=3334419250096079788&igsh=cGptMml6dXNzMDA3

**2.3 Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են ծրագրի գործողությունների իրականացմանը:**

Հաշվետու ժամանակահատվածում ծրագրի իրականացման էական խոչընդոտներ չեն գնահատվել: Դրանք որոշ չափով կապված են եղել այն հանգամանքի հետ, որ ծրագրի հաշվետու ժամանակահատվածը եղել է ծրագրի սկիզբը, ծրագրում ներգրավված են եղել նոր աշխատակիցներ, որոնց հետ տարվել են աշխատանքներ, տարեցների հետ շփման հմտությունների նորովի ուսուցում, չնայած ունեցած փորձին:

**2.4 Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):**

Շահառուների ցուցակը կցված է հաշվետվությանը:

- Ծառայությունների մատուցում խնամքի կարիք ունեցող, կյանքի դժվարին իրավիճակում հայտնված՝ տարեց և/կամ հաշմանդամություն ունեցող 18 տարին լրացած անձանց,
- Նոր շահառուների դեպքում՝ կարիքների գնահատում, անհատական սոցիալական ծրագրի կազմում, պայմանագրերի կնքում:

**2.5 Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել ծրագրի աշխատանքային պլանով, բայց իրականացվել են ծրագրի նպատակին հասնելու համար:**

- Սոցիալական աշխատողը ինը շահառուի աջակցել է սոցիալական

նպաստի տարեկան փաստագրաման համար անհրաժեշտ փաստաթղթերը և դիմումները ներկայացնել Արմավիրի ՄՍԾ ՏԿ:

- Հաշվետու ժամանակահատվածում հինգ շահառուի համար սոցիալական աշխատողը ՄՍԾ է ներկայացրել անհրաժեշտ փաստաթղթերը եռամսյակային հրատապ օգնություն ստանալու նպատակով:
- Սոցիալական աշխատողն աջակցեց երկու թոշակառուի թոշակի անկանխիկ վճարման եղանակի անցման կազմակերպանը: Սոցիալական աշխատողը երեք տարեցի աջակցել է կենսաթոշակային քարտերի փոփոխման բանկային գործընթացներում:
- Երկու տարեցի սոցիալական աշխատողը աջակցել է նոր անձնագրերի ստացման հարցերում:
- Մեկ տարեցի տրվել է խորհրդատվություն հաշմանդամության կարգ ձեռք բերելու և հատուկ խնամքի հաստատություն ուղեգրվելու ընթացակարգերի մասին:
- Սոցիալական աշխատողը բուժքրոջ հետ կազմակերպել է տարեցի այց տեղամասային պոլիկլինիկա, նշանակվել է ԼՈՌ բժշկի կոնսուլտացիա, այնուհետև հետազոտություններից հետո բժշկի կողմից նշանակվել է աուդիոմետրիա հետազոտություն «Էրեբունի» ԲԿ-ում: Բուժքրոջ ուղեկցությամբ տարեցն անցել է աուդիոմետրիա հետազոտությունը, որից հետո սոցիալական աշխատողը Միասնական սոցիալական ծառայությունում կազմակերպել է անվճար աջակցող միջոց ձեռք բերերու գործընթացը: Լսողական սարք ստանալու համար կազմակերպություն ներկայացվեց քիթ-կոկորդ-ականջաբանի եզրակացությունը և պետական հավաստագիրը: Բուժքրոջ ուղեկցությամբ աջակցող միջոց տրամադրող կազմակերպությունից ստացան լսողական սարքը:
- Բուժքույրը սոցիալական աշխատողի հետ միասին հինգ տարեցի ուղեկցել է հիվանդանոց հետազոտման նպատակով: Կատարվել է լաբորատոր հետազոտություն, նյարդաբանի, ոսկրաբանի, ականջաբանի

և տեղամասային բժշկի կոնսուլտացիա: Նշանակվել է դեղորայք և միջմկանային ներարկումներ, որոնք տան պայմաններում իրականացրել են բուժքույրերը:

- Երկու տարեցի ուղեկցել են տեղամասային պոլիկլինիկա ակնաբույժի կոնսուլտացիա: Կազմակերպվել է սրտաբանի տնային այց, կատարվել է սրտի ուլտրաձայնային հետազոտություն, որից հետո սոցիալական աշխատողը բուժքրոջ հետ կազմակերպել են երեք տարեցի ստացիոնար բուժումը, մեկ տարեցը բուժումը ստացավ Արմավիրի ԲԿ-ում թերապևտիկ բաժանմունքում, երկուսը՝ Երևանում:
- Հաշվետու ժամանակահատվածում մեկ տարեց մահացել է, մեկ տարեց տեղափոխվել է արտերկիր աղջկա մոտ:
- Ծրագրի շրջանակներում շարունակում ենք համագործակցությունը հովանավորների հետ, ովքեր մեր տարեցների ծննդյան օրը նվիրում են անվճար տորթեր, անվճար կտրում և խնամում են մեր տարեցների մազերը: Այժմ ունենք երկու նոր հովանավոր, ովքեր նվիրում են մեր տարեցներին գեղեցիկ ծաղիկներ և հագուստ:
- Սոցիալական աշխատողի միջնորդությամբ երեք տարեց Կարմիր Խաչից ստացավ սննդի փաթեթ: Համագործակցելով համայնքապետարանի սոցիալական աջակցության բաժնի հետ, երեք տարեց ստացան ֆինանսական աջակցություն:

Digitally signed by ARAKELYAN NAIRA 5114670166
Date: 2024.04.03 14:59:44 AMT